Թուրքական պատմագիտական համագումարները

1932թ.-ին փետրվարի 14-ին Աթաթուրքի հրահանգով կազմակերպվեց դասընթաց պատմության ուսուցիչներին նոր պատմական հայեցակարգը ներկայացնելու նպատակով: Այդ դասընթացը պետք է կոչվեր «Պատմության ուսուցիչների դասընթաց», սակայն առաջին հավաքույթից հետո այն կոչվեց «Թուրքական պատմագիտական առաջին համագումար» և բոլոր արձանագրությունները հրատարակվեցին այս անվանումով: Այնուհետև 1932 թվականի հուլիսի 2-11-ը Անկարայի Ժողովրդական տան շենքում պաշտոնապես սկսվեցին Թուրքական պատմագիտական առաջին համագումարի աշխատանքները[45]: Այն կազմակերպվել էր Ազգային կրթության նախարարության հետ համատեղ, որին հրավիրված էին Ստամբուլի համալսարանի պրոֆեսորներ, ինչպես նաև ուսումնարանների և միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչներ: Համագումարին մասնակցում էր 232 մարդ, որոնցից 25-ը Թուրքական պատմագիտական ընկերության անդամ, 10-ը համալսարանի ներկայա-

---

Yayınları, İstanul, 1983, s. 33, ss. 111,

[45] *İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - Türk Tarih Kurumu Basımcvi - Ankara 1973, s. 1, ss.158*

ցուցիչ, 1-ը գեղեցիկ արվեստների ակադեմիայի անդամ, 198-ը ուսումնարանների և միջնակարգ դպրոցների ուսուցիչներ:

Հատկանշական է այն փաստը, որ համագումարի մասնակիցների գերակշռող մասը ուսումնարանների և դպրոցների ուսուցիչներ էին: Դա խոսում է այն մասին, որ թուրքական իշխանությունները պետական գաղափարախոսությունը փորձում էին տարածել առաջին հերթին դպրոցահասակ երեխաների շրջանում: Թուրքական իշխանությունների նման քաղաքականությունն ինքնին հասկանալի է, քանի որ ընդամենը մի քանի տարի հետո նոր սերունդը պատմության վերաբերյալ ստանալու էր այն գիտելիքները, ինչ ներկայացնում էին Թուրքական պատմագիտական ընկերության պատմաբանները: Այսինքն թուրք երեխային տրվելու էր տեղեկություններ Աթաթուրքի ցանկությամբ «վերամշակված» և հրատարակված պատմության դասագրքերի միջոցով: Այդ ամենը թուրքական իշխանությունները ցանկանում էին իրագործել թուրք մանկավարժների միջոցով, որոնց ձեռքում էր գտնվում ապագա սերնդի կրթության ու դաստիարակության «խիստ պատասխանատու» գործը:

Համագումարի նախագահության կազմը հետևյալն էր. նախագահ՝ Ազգային կրթության նախա-

ռար էսաթ Ուրաս[46], փոխնախագահ Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ և Անկարայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքական պատմության պրոֆեսոր Յուսուֆ Աքչուրա, Ազգային կրթության նախարարության կրթության և դաստիարակության վարչության պետ՝ Իհսան (Սանգա): Քարտուղարներ՝ ազգային կրթության նախարարության հրատարակչության տնօրեն՝ Անկարայի արական դպրոցի պատմության ուսուցիչ Ֆաիք Ռեշիթ Բեյ, Թուրքական պատմագիտական ընկերության քարտուղար Մուսթաֆա Ուլուղ Բեյ[47]:

Համագումարի բացման խոսքը հանձնարարվել էր Ազգային կրթության նախարար էսաթ Բեյին, իսկ Աթաթուրքը առանց հատուկ միջամտության հետևում էր այդ աշխատանքներին: Թուրքական պատմագիտական առաջին համագումարին մասնակցում էին միայն թուրք պրոֆեսորներ և ուսուցիչներ: Օտարերկրյա որևէ ներկայացուցիչ համագումարին չէր հրավիրվել[48]:

---

[46] Դա այն նույն պատմաբանն է, որը զբաղվել է Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության հարցի ուսումնասիրությամբ և հայտնի է իր "Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi" աշխատությամբ:

[47] İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 11, ss.158,

[48] İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 13, ss.158,

Թուրքական պատմագիտական առաջին համագումարին օտարերկրացի պատմաբանների բացակայության կապակցությամբ կարելի է նշել մի քանի հնարավոր վարկած: Թուրքական իշխանությունները այդ ժամանակ դեռ չէին պատկերացնում թե ինչ է իրենից ներկայացնելու Թուրքական պատմագիտական ընկերությունը, ինչպես են իրենց դրսևորել այդ ընկերության աշխատանքներին ներգրավված մասնագետները: Հայտնի չէր թե ինչպես է կազմակերպվելու ուսուցիչների վերապատրաստման դասընթացը (հետագայում այն դարձավ համագումար), քանի որ դա ավելի շատ կրում էր ուսուցողական բնույթ և իրականում այդ ժամանակ նպատակ չի եղել կազմակերպել համագումար[49]: Առաջին դասընթացին չէին կարող հրավիրվել միջազգային դիտորդներ, քանի որ թուրքերը այդ ժամանակ դեռ խիստ կարիք ունեին թուրքական պատմական նոր հայեցակարգը ներկայացնելու առաջին հերթին իրենք իրենց:

Համագումարի առաջին օրը օրակարգում քննարկման առարկա էր հանդիսանում Թուրքական պատմագիտական ընկերության անդամ Աֆեթ Ինանի «Պատմությունից առաջ և պատմության լույսի ներքո»

---

[49] *İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 11, ss.158,*

վերտառությամբ զեկուցումը:[50] Երկրորդ օրը քննարկման էր ներկայացվել Թուրքական պատմագիտական ընկերության քարտուղար, դոկտոր Ռեշիթ Գալիփի «Հայացք թուրքական ցեղի և մշակույթի պատմությանը» վերտառությամբ զեկուցումը[51]: Երրորդ օրը Ստամբուլի համալսարանի մարդաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Շեֆքեթ Ազիզի «Թուրքերի մարդաբանությունը» զեկուցումը:[52] Վեցերորդ օրը թուրքական պատմագիտական ուսումնասիրման ընկերության նախագահ Յուսուֆ Աքչուրա Օղլուի առաջարկությամբ քննարկվել է «Պատմությունը գրելու և պատմությունը պարտադրել կարդալու» մանրամասներին վերաբերող գիտաժողովի կազմակերպման հարցերը[53]:

Թուրքական պատմագիտական ընկերության գործունեության սկզբնական շրջանի ուսումնասիրությամբ կարելի է եզրակացնել, որ այդ ընկերությունը ստեղծվել է հատուկ նպատակներով և այդ իրողությունն իրենք թուրքերն էլ չեն թաքցնում: Այս տեսանկյունից պարզ է դառնում, որ Թուրքական պատ-

---

[50] *Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, Münakaşalar , Ankara -, s. 2, ss. 631.*

[51] *Տես նույն տեղում, էջ 96:*

[52] *Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, Münakaşalar , Ankara -, s. 240, s. 631.*

[53] *Տես նույն տեղում, էջ 574*

մագիտական ընկերության հիմնադիրները և «հովանավորները» հասարակությանը ուղղակի պարտադրել են տեղեկանալ ընկերության կողմից ներկայացվող պատմական «նոր հայեցակարգին»:

1932 թվականի փետրվարի 14-ին Աթաթուրքի հրամաններում թուրքական պատմագիտական առաջին համագումարից բացի տեղ է գտել ևս 3 խնդիր:

1. Վերջին ուսումնասիրությունների և փաստերի հիման վրա կրկին գրի առնել «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը:

2. Ուսումնասիրությունների համար պատրաստված 4 հատոր պատմության գրքերում անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո 1932-1933 ուսումնական տարվա համար հանձնել նոր հրատարակության:

3. Նախակրթարանների համար պատրաստել պատմության նոր դասագրքեր:

Այս հարցերը քննարկվեցին 1932 թվականի փետրվարի 25-ին սկսված և մինչև մարտի 10-ը տևած համագումարի 5 ժողովների ընթացքում, որտեղ հստակ հանձնարարություններ տրվեց համապատասխան մարմիններին: Աթաթուրքը խնդիր էր դրել, որ «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը պատրաստ լինի մինչև 1932թ.-ի աշնանը: 1932թ.-ի հուլիսի 13-ից մինչև հոկտեմբերի 17-ը Անկարայում և

Ստամբուլում տեղի ունեցած նստաշրջանների ընթացքում կայացվեցին վերջնական որոշումներ այն մասին, թե ովքեր պետք է գրեն աշխատությունները և այն երբ է պատրաստ լինելու: Ըստ այդմ որոշվեց պատմության բաժինը հանձնարարել Թուրքական պատմագիտական ընկերության անդամներին, իսկ մշակույթի բաժինը առանձին մասնագետների: Այսպիսով ակնհայտ երևում է, որ թուրքական իշխանությունների խնդիրը ոչ թե պատմության իրական պատկերը ներկայացնելն էր, այլ ուղղակի նրանց հետաքրքրում էր հատկապես պատմության բաժինը «յուրովի» ներկայացնելու հարցը: Այլապես մշակույթի բաժինը և այդ բաժնի կողմից հրատարակված նյութերը նույնպես կարող էին պահել հատուկ հսկողության տակ: Սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այդ բաժնի աշխատանքներին Աթաթուրքը հիմնականում չի միջամտել:

Թուրքական պատմագիտական առաջին համագումարից հինգ տարի հետո 1937թ.-ի սեպտեմբերի 20-25-ը Ստամբուլի Դոլմաբահչե պալատում գումարվեց թուրքական պատմագիտական երկրորդ համագուման-

ը[54]: Այս համագումարին առաջին անգամ հրավիրվել էին օտարերկրացի գիտնականներ[55]: Թուրքական պատմագիտական երկրորդ համագումարի կազմակերպման նպատակն էր օտարերկրացի գիտնականներին ներկայացնել թուրքական պատմական «նոր հայեցակարգը» և ուսումնասիրված տեղեկությունները: Բացի այդ ուսումնասիրությունների գործընթացի վերաբերյալ համագումարի ընթացքում կազմակերպվել է ցուցահանդես, ուր ներկայացվել են Օսմանյան կայսրության վերջին շրջանին և Միջին Արևելքում զարգացող իրադարձություններին վերաբերող տարբեր նյութեր[56]: Թուրքական պատմագիտական երկրորդ համագումարին ներկայացված բոլոր ուսումնասիրությունները Աթաթուրքը կարդացել էր մեկ առ մեկ, որից հետո միայն թույլատրել էր դրանք ներկայացնել[57]:

---

[54] *II Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Yayınevi, IX. Seri: No. 2, Kenan Matbaası, Istanbul, 1943, s. XXXVII, ss. 1187.*

[55] *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, ss.775. Տես նաև Türk Tarih Kurumu Yayın Katalogu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s.1, ss.40.*

[56] *Türk Tarih Kurumu Yayınları, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kürümü Basımevi - Ankara, 1989, s.2, ss.40.*

[57] *İğdemir U., Cumhuriyetin 50 Yılında Türk Tarih Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1973, s. 41, ss. 158.*

Աթաթուրքը հսկողության տակ էր պահում համագումարի ընթացքում ներկայացված բոլոր հրապարակումներն ու ելույթները, այդ իսկ պատճառով համագումարի աշխատանքները ընթանում էին ավելի «հավասարակշռված»:

1943թ.-ի նոյեմբերի 15-20-ը Անկարայում տեղի ունեցած Թուրքական պատմագիտական երրորդ համագումարի, աշխատանքները 2-րդ համաշխարհային պատերազմի պատճառով սկսվեցին ուշացումով: Պատմության ուսումնասիրությունների աշխատանքներին ավելի մոտիկից հետևող Իսմեթ Ինոնյուն (որը դարձել էր Թուրքիայի Հանրապետության նախագահ 1938թ.) նպատակահարմար չգտավ երրորդ համագումարի աշխատանքները սկսել 1943թվականից ավելի ուշ[58]:

Թուրքական իշխանությունները դրա պատճառները կապում էին Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ: 1942թ.-ին Ստալինգրադի ճակատամարտից հետո թուրքական իշխանությունների համար ամեն ինչ պարզ էր, արդեն պատերազմի հետագա ընթացքը կանխորոշված էր և ուժերի նոր վերադասավորում տարածաշրջանում չէր կարող ակնկալվել: Նման պարագայում համա-

---

[58] *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. XXIX*

գումարի աշխատանքները հարկավոր էր սկսել 1943թվականին:

Երրորդ համագումարին Թուրքական պատմագիտական ընկերության գլխավոր քարտուղարն իր ելույթում նշում է. «Վերջին վեց տարիներին Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը իրագործելու նպատակով ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցառումները: Այդ ժամանակահատվածում կատարվել է Անատոլիայում մեծ պետության ստեղծման, խեթերի սփռման սահմանների ուսումնասիրությունը, հին Անատոլիայի, Միջին Ասիայի, էգեյան ծովի ավազանի, հարավային Ռուսաստանի և արևելյան Եվրոպայի մշակույթների ուսումնասիրությունները, ինչպես նաև հրապարակվել են հազարավոր տարիներ ի վեր մեծ քաղաքակրթության բնակավայր հանդիսացող Անատոլիայի պատմությանը վերաբերող փաստաթղթեր»[59]:

Անհրաժեշտ է նշել, որ Թուրքական պատմագիտական ընկերության մասնագետները անդրադառնալով արաբներին, պարսիկներին, իրաքցիներին, սելջուկներին, ռուսներին, չինացիներին թուրքական պաշտոնական պատմագրության մեջ հատկապես Փոքր Ասիայի (Արևմտյան Հայաստանը ներառյալ) վերաբերյալ հրա-

---

[59] *Տես նույն տեղում, էջ 14 – 15:*

պարսկումներում որևէ կերպ չեն անդրադառնում հայերին: Թուրքական պատմագիտական ընկերությունն անդրադարձել է այդ տարածաշրջանում ապրող գրեթե բոլոր ժողովուրդներին բացի հայերից:[60] Փաստորեն թուրք պատմաբանները հարցին անդրադարձել են այն տեսանկյունից, թե իբր թուրքերը այդ տարածաշրջանի ամենահին ժողովուրդն են:

Թուրքական պատմագիտական չորրորդ համագումարը տեղի է ունեցել 1948 թվականի նոյեմբերի 10-14-ը Անկարայում, Լեզվի և պատմա-աշխարհագրական ֆակուլտետի մասնաշենքում: Ինչպես ընկերության աշխատանքներին, այնպես էլ համագումարի կազմակերպմանը հետևում էին հանրապետության այն ժամանակվա նախագահ Ի. Ինոնյուն, վարչապետ Հ. Սաքան, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Շ. Ասրաջողլուն, նախարարները և Գլխավոր շտաբի պետ Ս. Օմուրթաքը[61]:

Ընկերությունը շարունակում էր մնալ պետական հովանավորության ներքո և կատարում էր պետության առաջադրանքները: Ինչպես արդեն նշվել է, ընկերութ-

---

[60] *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. 14-46, ss.775.*

[61] *IV Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1952, s. XI, ss. 518.*

յան առջև նպատակ էր դրված պատրաստել և աշխարհին ներկայացնել թուրքական պատմական նոր հայեցակարգը:

Թուրքական պատմական չորրորդ համագումարին ի թիվս այլ նյութերի ներկայացվել է ուսումնասիրություն «Օսմանյան ղեկավարությունը և վրացիները» թեմայով: Այն հետագայում հրապարակվել է ընկերության պաշտոնական տեղեկագրում: Թուրք պատմաբաններին անհանգստություն է պատճառել վրացի երկու պատմաբանի կողմից ներկայացված «վրացական հարցը», որի արդյունքում էլ ուսումնասիրվել և հրապարակվել է Մահմուդ երկրորդի ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերը:

Վրացի պատմաբանները նշում են, որ թուրքերը չափազանց դաժան են վարվել վրացի ժողովրդի նկատմամբ, վրացիներին պարտադրել են մոռանալ իրենց կրոնը և ընդունել իսլամ: Այդ պատճառով էլ վրացի ժողովուրդը միավորվելով ռուսների հետ պատերազմել է օսմանցիների դեմ[62]:

Հետաքրքրական է, որ ընկերությունը պաշտոնական պատմագրության մեջ ազատ անդրադարձել է «վրացական հարցին», վստահ լինելով, որ նման վտանգ Թուրքիային երբեք չի սպառնում: Անդրադառնալով փաստորեն գոյություն չունեցող «վրացական

---

[62] *IV T2rk Tar4h Kongres4. T2rk Tar4h Kurumu Basimev4 - Ankara, 1952, s. 317, ss. 518.*

հարցին» ընկերության պատմաբանները չեն անդրադարձել իրենց քաջ հայտնի «Հայկական հարցին» ըստ երևույթին գիտակցելով դրա խիստ վտանգավոր հետևանքները:

Ուսումնասիրելով Թուրքական պատմա-գիտական ընկերության պաշտոնական տեղեկագրերը, այս ժամանակահատվածից հետո պարզ է դառնում և մինչև 1950 - ական թվականների հրապարակումներն ընկերությունը գտնվելով պետական հովանավորության ներքո իր ուսումնասիրություններում հազվադեպ և բոլորովին կարևորություն չներկայացնող դեպքերում է անդրադառնում հայերին (Հայաստանին)[63]: Դա պայմանավորված էր այդ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ որդեգրած մերժողական քաղաքականությամբ: Թուրքերը կարծում էին, որ մոռացության մատնելու և ընդհանրապես հայերին չանդրադառնալու պայմաններում հասարակության հիշողությունից ժամանակի ընթացքում դուրս կմնան օսմանական իշխանությունների կողմից ոչ վաղ անցյալում իրագործված Հայոց ցեղասպանության իրողությունները, որոնց իրավահաջորդ են համարվում ինչպես քեմալական շրջանի, այնպես էլ ներկայիս թուրքական իշխանությունները:

---

[63] *Տես, "Belleten"-ներ 1957թ.-ից մինչև 1965թ.-ը:*

Թուրքական պատմագիտական ընկերության 25-րդ տարեդարձի կապակցությամբ 1956թ. ապրիլի 12-17-ը տեղի ունեցավ Թուրքական պատմական հինգերորդ համագումարը[64]: Այս անգամ նույնպես Օսմանյան պատմությանը վերաբերող հարցեր ներկայացնելիս թուրք պատմաբանները անդրադարձան մի շարք երկրների այդ թվում նույնիսկ Հունգարիային և Բոսնիային՝ չանդրադառնալով Հայաստանին կամ հայերին[65]:

Փաստորեն 25 տարիների ուսումնասիրությունների արդյունքում, թուրք պատմաբանները, որոնք գրում էին Թուրքիայի պաշտոնական պատմագրությունը, բոլոր հինգ համագումարների ընթացքում բոլորովին չեն անդրադարձել Հայաստանին:

Թուրքական պատմական հինգերորդ համագումարից հետո՝ 1961 թվականի հոկտեմբերի 20-26-ին, տեղի ունեցավ Թուրքական պատմական վեցերորդ, իսկ 1970 թվականի սեպտեմբերի 25-29-ին՝ յոթերորդ համագումարները, որոնք իրենց կարևորությամբ և անհրաժեշտությամբ ավելի քիչ էին աչքի ընկնում քան նախորդները, սակայն ընկերության որդեգրած ուղին պահպանվում էր նաև այս համագումարների ժամանակ[66]:

---

[64] *V Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1960, s. IX, ss. 795.*

[65] *Տե՛ս նույն տեղում, էջ 464:*

[66] *$6dem4r Ulu6, Cumhur4yet4n 50 Yilinda T2rk Tar4h Kurumu, T2rk Tar4h Kurumu Basimev4 - Ankara, 1973, s. 45, ss. 158.*

Թուրքական պատմագիտական ութերորդ համագումարը տեղի է ունեցել 1976թ.-ի հոկտեմբերի 11-ին: Թուրքական պատմագիտական ընկերության գլխավոր տնօրեն Ուլուղ Իղդեմիրն իր զեկույցում նշել է, որ ընկերությունը բոլոր հնարավորություններն ուղղել է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան 100 ամյակին նվիրված համագումարը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Նախապատրաստական աշխատանքներին հետևում էր այն ժամանակվա նախագահ Ֆահրի Քորութուրքը:

Ութերորդ համագումարին Աթաթուրքի 100 ամյակի կապակցությամբ հնչել է հետևյալ առաջարկությունները.

- կրկին հրատարակել Աթաթուրքի ելույթները,
- նախապատրաստել և հրատարակել Աթաթուրքի ելույթների և հայտարարությունների շարքը,
- վերջին տարիներին հրապարակ եկած փաստաթղթերի լույսի ներքո կրկին հրատարակել Աթաթուրքի կենսագրական մանրամասները,
- հրատարակել օտարերկրյա թերթերում ու ամսագրերում տեղ գտած բոլոր նյութերը, որոնք անդրադարձել են Աթաթուրքի ժամանակաշրջանին,
- որպես մենագրություն հրատարակել Աթաթուրքի նամակները, որոնք վերաբերում են

պատմությանն ուղղված նրա աշխատանքներին,

- 1981 թվականին Աթաթուրքի ծննդյան առթիվ հրավիրել Թուրքական պատմական իններորդ համագումարը,
- կրկին գրել և մինչև իններորդ համագումարը հրատարակել «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը,
- կազմակերպել մրցույթ «Թուրքիայի պատմությունը հին ժամանակներից մինչև 1920-ական թվականները» մեկ հատորից բաղկացած գիրք, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետությանը նվիրված 1920-1970թթ.-ին վերաբերող պատմության գիրք գրելու համար,
- հատկացնել 50.000 լիրա մրցանակ Աթաթուրքի շրջանին վերաբերող ամենալավ աշխատության համար,
- հավաքել Աթաթուրքին վերաբերող բոլոր փաստաթղթերը և ստեղծել Աթաթուրքի արխիվը,
- կազմակերպել սեմինար նվիրված Աթաթուրքի կյանքին և ստեղծագործություններին,
- կազմել Աթաթուրքին և Հանրապետությանը նվիրված մատենագրություն՝ հավաքելով հրատարակված տեղական և օտարերկրյա բոլոր նյութերը,

- հրատարակել Աթաթուրքին նվիրված ալբոմ,
- ստեղծել Աթաթուրքի մասին պատմող կինոնկար[67]:

Փաստորեն Թուրքական պատմական ութերորդ համագումարը ամբողջովին նվիրված էր Աթաթուրքին: Երկրի զինվորական իշխանությունները և ընկերության անդամները ցանկանում էին իրենց նման վերաբերմունքով ցույց տալ, թե ինչպիսի մեծ գործ է կատարել Աթաթուրքը թուրքական պատմական նոր հայեցակարգը ամբողջ երկրում և արտերկրում շրջանառության մեջ դնելով:

1980թ.-ի սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած երկրորդ ռազմական հեղաշրջումը (Առաջինը տեղի է ունեցել 1960թ.-ի մայիսի 27-ին) թուրքական պատմական հայեցակարգը հանրությանը ներկայացնելու տեսանկյունից չափազանց օգտակար էր թուրքական իշխանությունների համար: Այդ ընթացքում ուշադրություն էր հրավիրվում հատկապես կրթության բնագավառի և պատմության ուսումնասիրման վրա:

Թուրքիայի Հանրապետության և Թուրքական պատմական ընկերության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան 100 ամյակի կապակցութ-

---

[67] *Afetinan A., "M.Kemal Atatürkün Doğumunun 100, yıldönümü (19 mayıs 1981) Türk Tarih Kurumunun Kuruluşunun 50. yıldönümü (15 nisan 1981), Belleten, cilt:XLIV, sayı: 176, Ekim 1980, s. 633-634, ss. 629-811,*

յամբ 1981թ.-ի սեպտեմբերի 21-25-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, բանակի գեներալ Քենան Էվրենի գլխավորությամբ (այն ժամանակ նախագահի պարտականությունները կատարում էր Էվրենը) Անկարայում հրավիրվում է Թուրքական պատմագիտական իններորդ համագումարը, որի ընթացքում Էվրենը հանդես է գալիս ընդարձակ ելույթով և նշում, որ Թուրքական պատմագիտական ընկերությունն իր գործունեության ընթացքում հասել է մեծ հաջողությունների և պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները: Այնուհետև ելույթ են ունենում Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ, պրոֆեսոր Էնվեր Զիյա Քարալը, ընկերության և իններորդ համագումարի գլխավոր քարտուղար, պրոֆեսոր Սեդաթ Ալփը, ինչպես նաև ընկերության գլխավոր տնօրեն Ուլուղ Իդդեմիրը: Էնվեր Զիյա Քարալը Թուրքիայում հայտնի է որպես Թուրքական պատմագիտական ընկերության ամենաժրաջան նախագահ, որի ղեկավարման ժամանակաշրջանում շատ ավելի ակտիվ և մատչելի կերպով է հանրությանը ներկայացվել թուրքական պատմական նոր հայեցակարգը: Նա հեղինակ է «Թուրքիայի Հանրապետության պատմությունը» (Ստամբուլ, 1944թ.) աշխատության:

Համագումարին ներկայացվել է ուսումնասիրություններ Միջին Ասիայի, Միջնադարյան Թուրքիայի

պատմության և Օսմանյան պատմության վերաբերյալ: Օսմանյան պատմության բաժնում առաջին անգամ մեծ տեղ է հատկացվել Օսմանյան կայսրությունում ապրող հայ ազգաբնակչության հետ այդ երկրի հարաբերություններին[68]:

Շատ կարևոր է ընդգծել այն փաստը, որ Քարալի նախագահության ժամկետները համընկավ ASALA-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) հայտնի դեպքերի հետ: Նման պարագայում ընկերությունը պետք է ավելի ակտիվ և «նպատակաուղղված» գործեր, սակայն իրողությունն այն է, որ նշված ժամանակահատվածում Թուրքական պատմագիտական ընկերության հեղինակությունը գնալով նվազեց: Այդ տարիներին դարձյալ հրատարակվեցին թուրքերի ծագմանը վերաբերող ուսումնասիրություններ, շատ ավելի հրապարակումներ հայտնվեցին Թուրքական պատմագիտական ընկերության օրգան հանդիսացող «Belleten»-ներում հատկապես հայերի վերաբերյալ: Փաստորեն այս ամենը սկսվեց 1965 թվականին Երևանում տեղի ունեցած բողոքի ցույցի և ավելի ակտիվ՝ 1973 թվականից սկսված ASALA-ի գործողություններից հետո, որը տևեց մինչև 1980-ական թվականները:

---

[68] *Pulat O., @IX Türk Tarih Kongresi@, Belleten, Cilt: XLVI/2, sayı:180, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara 1981, s. 587-588, ss. 433-588,*

Հայերին անդրադառնալու խնդիրը թուրք պատմաբանների համար անհրաժեշտություն դարձավ այն ժամանակ, երբ 1945թ. Ստալինը ցանկանում էր Արևմտյան Հայաստանի որոշ հողեր միացնել Վրաստանին և Հայաստանին: Հայտնի է, որ 1946-47թթ. տեղի ունեցած մեծ ներգաղթը դեպի Հայաստան կազմակերպվել էր հայերին այդ տարածքներում վերաբնակեցնելու նպատակով: Սակայն խորհրդային իշխանությունների մտադրությունները չիրագործվեցին, քանի որ աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին ակտիվ միջամտում էր ԱՄՆ-ը: Այս իրողությունը մեծ անհանգստություն պատճառեց թուրքերին, որի արդյունքում էլ թուրքական պաշտոնական պատմագրությունը կերտող պատմաբանները 1946թ.-ից ի վեր իրենց հրապարակումներում սկսեցին շատ հազվադեպ անդրադառնալով հայերին՝ մերժել նրանց երբևէ գոյությունը և ունեցած դերը Փոքր Ասիայի տարածաշրջանում:

Մ.Քեմալին հաջողվում է մասամբ հասնել իր նպատակին՝ այն է, թուրք հասարակությանը և հատկապես նոր սերնդին ներկայացնել թուրքական պատմական նոր հայեցակարգ:

Աթաթուրքն իր բոլոր ջանքերը կենտրոնացնելով Թուրքական պատմագիտական ընկերության գործունեության ուղղությամբ, լիարժեք հաջողության հասնելու համար, միաժամանակ փորձում է Թուրքիայում

մեծացնել հարգանքը թուրքերեն լեզվի նկատմամբ և ապահովել թուրքերենի անկախությունը այլ լեզուների ազդեցությունից[69]:

Թուրքական պատմագիտական ընկերությունը 1963 թվականից հետո մինչ օրս կազմակերպում է «Աթաթուրքի տարեկան գիտաժողովներ» միջոցառումը, որը ներառում է Թուրքիային և Թուրքիայի պատմությանը վերաբերող տարբեր խնդիրներ[70]:

Թուրքիայի Հանրապետության նախարարների խորհրդի 11.VIII.1983թ.-ի թիվ 2876 որոշմամբ Թուրքական պատմագիտական ընկերությունը վերանվանվում է Թուրքիայի Հանրապետության Աթաթուրքի անվան մշակույթի, լեզվի և պատմության բարձրագույն ընկերություն[71]:

---

[69] *Türk Dil Kurumunun 40 Yılı, Türk Dil Kurumu Yayınları, Ankara Üniversitesi Basımevi, 1972, s. 15, ss. 186,*

[70] *Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk tarih Kurumu Yayınları, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1989, s. 3, ss. 40*

[71] *Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s.1, ss.40,*